ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Կոմիտաս 54 Բ
Հեռ.(+37412)351035
Էլ. փոստ՝ pmc@moh.am

«17» «06» 2026 թ Ե-658

«ՄԵԳԱ ԲՈՒԼԴԵՐ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Է. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(ք. Երևան, Արամ Խաչատրյան 15)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի տիկին Սարգսյան,

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Մեգա Բուլդեր» ՍՊԸ-ի միջև 2026 թվականի մարտի 12-ին կնքվել է «ՔԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/23» ծածկագրով «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի ռենտգեն սենյակի ներքին հարդարման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 8.5 և 8.8 կետերը հիմք ընդունելով՝ փոխադարձ համաձայնությամբ կնքվել է համաձայնագիր աշխատանքի կատարման ժամկետը մեկ անգամ մինչև 30 օրացուցային օր երկարաձգելու համար: Պայմանագրի 1. 1 կետի համաձայն Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Մեգա Բուլդեր» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն (տվյալ դեպքում՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ն) պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը 09.06.2026թ. Ե - 629 գրությամբ դիմել է «Մեգա Բուլդեր» ՍՊԸ-ին՝ արձանագրելով, որ առ 09.06.2026թ. Ընկերության կողմից որևէ աշխատանք չի կատարվել: Ինչպես նաև տեղեկացվել է, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում Պատվիրատուն կգործի «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Սակայն Ընկերությունը կողմից մինչ օրս որևէ աշխատանք չի կատարվել:

Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» պարբերությունների համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, և

Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հիմք ընդունելով Ընկերության կողմից թույլ տրված պայմանագրային պարտավորությունների խախտումը՝ Պատվիրատուն, ղեկավարվելով «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Մեգա Բուլդեր» ՍՊԸ-ի միջև 2026 թվականի մարտի 12-ին կնքված «ՔԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/23» ծածկագրով պայմանագրի վերը նշված կետերով, որոշել է միակողմանի ամբողջությամբ լուծել Պայմանգիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (տուժանք,տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը ՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՔԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/23» ծածկագրով ընթացակարգի հարվերի 8.14 կետի համաձայն՝

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները՝ համապատասխանաբար 300 210 ՀՀ դրամ (Երեք հարյուր հազար երկու հարյուր տասը) և 450 315 ՀՀ դրամ (Չորս հարյուր հիսուն հազար երեք հարյուր տասնհինգ) «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի 900018007345 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Հարգանքով՝ Կամո Մանուկյան

Կատարող՝ Գնումների ավագ մասնագետ
Մանուշակ Գրիգորյան
հեռ. 012351035/304/